

Ա Պ Ա Պ Ա Ս

Թիկ թ. — ԵՐԳԱԿ ԺԹ. 1886 ՏՎՐԻ ԺԹ. ՀՈՒՏԵՄԲԵՐ 31

ԿՐՈՆԱԿԱՆ


ԽՆՉ ԿԵՋՆՔ ՔՐԻՍՏՈՆ Ե:

Գաղ. Բ. 20:

*Որոնց որ իմ Հայրս ինձ է տուել, * ասաց Քրիստոս Տէրն մեր վսեմ մոքով, ամենքն էլ յաւխանական կեանք պէտքէ ունենան, ինչպէս որ ես իմ Հօրս մօռն եմ: » Եւ Փրկչի ոյս մեծ խօսքն ամեն ժամանակներումը հնցվում է ու հնցվում:

Որոեղ էլ որ այս խօսքը հնցուել է, ամեն տեղ էլ միշտ ճշմարտուել ու հաստատուել է. իւրաքանչիւր սիրոս, որ հաւատարմութեամբ է մրցել, վերջապէս յազմանակը տանելով, պայծառացել է: Այլ որ Փրկչի մաքովն է ապրում, նորա համար մահն էլ շահ է:

ՄՇՆՅ են նշանակում այս խօսքերը թէ Քրիստոս է ինչ վեան+:
կրօն մարդն այս խօսքերը կարդալով, ինքն իրան տալիս է
զգացմանքների մի հոսանքի. իսկ նա, ով որ պարձենումէ,
սրբութեալ իր մէջը թէ՝ մոքով բաւական լուսաբարութէ, շատ ան-



գամ ժպտում է կարեկցարար այս գեղեցիկ մաքին վերայ և նոյն շափ էլքիչ է զգում ու համանում այդ խօսքերի երջանկացնող միտքն:

Ինձ կեանք Քրիստոն է: Այս խօսքը մեզանից չէ պահանջում ամենելին զգայական սէր գէպի մեր Փրկիչն, ինչպէս որ յարում են ու համակրում երկրաւոր բարեկամներին, կամ ինչպէս որ հարսը փեսային է սիրում զաւակը՝ հօրը, եղբայրը՝ եղբօրն: Որովհետեւ Քրիստոսին աշխարհիս վերայ էլքենք տեսնում, ու նորա երկրաւոր գոյութիւնն էլ չէ, որ մեզ համար ամենասուրբ և Աստուածային բանն էր նորանումը. այլ նոր հոգին միայն, Աստուծոյ այն կենդանի հոգին, որ նորանով յայտնուեցաւ ամեն գարերում ապրող մարդկային ազգին:

Քրիստոսի հոգին ասլրել նշանակում է սյնապէս մտերմացած ու կապուած լինել նոր վսիմ մասնողութեան կերպի հետ, որ նոր հայեացքն աշխարհիս վերայ, նորա մոքերը մարդկային կոչման մասին՝ մեր մահից տռած ու յետոյ՝ բոլորովին ՆԵՐ հայեացքն ու ՆԵՐ մոքերը գարձած լինին, որեմն և Քրիստոս, այսպէս ասենք, մեր մէջը ապրում լինի:

Ինչքան քիչ մարդիկ կան որ այս խօսքերի մէջ պարունակուած ճշմարտութեան իմաստը լաւ բմբռնած ու պարզ հասկացած են: Որչափ քիչ մարդիկ կան, որոնք սրբազն Պօղոս Առաքելոյ հետ կարողանային իրանց բերոնից հանել նորա այս խօսքերը թէ՝ «Ես առըստմ եմ, բայց այժմ ոչ լի ես», այլ Քրիստոս է առըստմ իմ մէջս, պատճառ որ ինչ որ ես այժմ ապրում եմ մարմ նով, ապրում եմ հաւատովս Աստուծոյ Որդւոյն, որ ինձ սիրեց, և իւր անձը զոհեց ինձ համար:

Ի՞նչ կեանք Քրիստոն է: Ես շոնչ եմ քաշում, այսպէս ասեմ, նորութեան մէջ, ես արհամարհում եմ ծառայելն անմիտ կրքերի, ես բարձրանում եմ հոգւովս բարոյական մաքրութեան, սուրբ վարքի նոյն աստիճանին, որոյ վերայ նա գտնվում էր, և գէպի որը ուզում էր մեզ բարձրացնել իւր երկնային խօսքով:

Եւ ով որ Քրիստոսի հոգին ունի, նորա մէջը բնահիւստ առըստմ է Քրիստոս, նորա մէջ բնակվում է Աստուծութային. նորա այքի առաջ ստուերի նման անյայտահում են երկրաւոր պատրանաց տմպերը, նա զանազանում է զգայական երեւթից էականը միայն. նա էլ չի գտնում իւր կեանքումը գլխին եկածների մէջն իրար

Հակառակ բաներ, այլ նորա համար զարմանալի կերպով լուսաւոր-
գում է ու պարզվում այն ամենայն, ինչ որ մութ է, նոտ գերեղ-
մանի մէջ ոչ թէ մահ է տեսնում, այլ այս ու այն կեանքի մէջ մի-
այն միենոյն գոյութիւն, նա չէ կարող անբաղդ լինել. այն ցան,
որ նորան՝ իրրե մարդու շատ անգամ ովտք էր յաղթէր, նորա
հոգին անբնկնելի է պահում, նա կարող է իրան միշտ ուրախու-
թիւն բերող առաքինութիւնովն իւր կեանքն անցկացնել և՝ Աստ-
ուածոյին զուարթութեամբ՝ անդորր սրտով մեանիլ՝ Քրիստոսի
նման :

Բայց ի՞նչպէս կը լինի այդ, կամ լինելու բան է, Միթէ կարող է
այդ անել մի մահկանացու մարդ : — Ասոկածելու տեղ քւնիս
այդ կողմանէ, որովհետեւ Աստուածային խմաստունը քեզանից
լաւ գիտէր թէ՝ ի՞նչ կարող է անել մի քաջասիրտ մարդ : Այսու,
նա կարող է այդ մարդը լինել, երբ որ նորան մի մեծ կամք է ո-
գեսորում, և քանի որ նա իւր զգայական բնութեան ցեխի մէջը
գեռ բոլորովին թաղուած ու կորած չէ, որ օտար բան դարձած լինի
նորա համար մտածմունքն Աստուածային բանի վերայ, նա կարող
է այդ լինել, երբ որ մի գժու արատար արկած սահմանուած է,
որ նորա զլիխն գայ, ու այդ իսկ արկածն նորան հասկացրել է աշ-
խարհիս վայելչութեան ոչնչութիւնը մի զարհուրելի և միանգա-
մայն լուրջ ձայնով նորան քարոզելով: Բայց նա չէ կարող այդ լինել
միայն իւր մարդկային ուժովն, այլ Աստուծոյ տմինակարաղ
շնորհօքը :

Եկանուածուած էր Աստուծոյ, մէջ անվախճան էս-նեան Տէրոջն, այն
Հօքն, որ անհուն ուրուլ գրկոծ ունի ի-ը բուլը արարածներին:

Դու էլքո Աստուծոյդ վերայ միշտ և հանապազ այդպէս ես մտա-
ծել ու նորան այդ մեծութեան ու բաձրութեան մէջ ճանաչել ար-
գեօք: — Կարծիք չկայ, որ դու շատ անգամ նորան ազօթք ես ա-
նում իրեւ. քո Հօք, բայց, կարելի է, որ դու նորան սիրում ես
այնպէս, իբր թէ լինէր նա միայն քո հայրդ, միայն +* ընտանեացդ,
+* աանգ պաշտապանը. Թէ նա հայր է նոյնպէս բոլոր միւս արա-
րածոց, գորտ վրայ քեզ համար պարզ գաղափար չ'կր կազմել,
այլ մութ կերպով էիր միայն մտածում այդ բանն: Ի՞նչպէս կա-
րող էիր դու ուրիշ շատ անգամ այնպիսի բաներ նորանից խնդրել,
որ +* երկրաւոր շահ պիտի բերէին: բայց +* ընելիներին վնասու Ի՞նչ-
պէս կարող էիր դու ամենասուրբ և սիրապատասր Հոգւոյն ազօթք

անել ու միենայն ժամանակ ատել ուրիշ մարդոցը՝ շատ անգամ ընցառիրութիւնիցդ, նախանձիցդ, կամ հպարտութիւնիցդ։

Քրիստոս այզպէս չեր ազօթք անում։ Նա առում էր՝ «Հայր Ձեւ» Նա պաշտում՝ էր նորան՝ իրրե Աստուած ամենայն արարածոց՝ առանց բացառութեանց որ միենայն ցափով Հայր է թէ ամենայեախն և թէ ամենանշանաւոր մարդու։ Որ նոյնչափ իմամբ է առնում բարօրութեան մասնաւոր մարդոց, որչափ որ բոլոր աշխարհիս էլ։ ԱՌ ԷՐԵՒԱՆԻ Է՛, այսինքն՝ յաւիտենական Հայրն եւ այն ամենայն արարածի, որ կայ այս աշխարհումն ու գոյութիւնն ունի։ ուրիմն ինչ արկածներ էլ։ որ ինձ պատահին, ամենին սիրող Հօրո գիտութեամբն են պատահում։ այդ արկածները սերտ կապով կազմակցած են բոլոր աշխարհիս կարգի ու երջանկութեան հետ, որոյ մի չնչին մասն եմ ես։ Եմ քաշածներս մարմնով, իմ երկրաւոր անրազդութիւններս, որոց մէջ ընկնում եմ, միշտ միջոց են աւելի բարձր նպատակների համար Աստուծոյ արարածոց կորգի ու կապակցութեան մէջ։

Եթէ զու յիրաւի Քրիստոսի մտքովն ես Աստուծոյ պաշտել, մի հարցրու ինքդ քեզ թէ ինչո՞ւ ես քո սրտաւմք առում նոցա, ուրոնք որ ուրիշ հաւատի են և ուրիշ եկեղեցւոյ անդամք, քան թէ դու։ — Աստուած միայն քո Աստուածդ յէ, այլ Աստուած է նոյնպէս և՛ հրէից, և՛ հեթանոսաց և այն ամեն աղզերի։ որոնք որ ուրիշ ուրիշ հաւատների են։ Ուզում ես զու նորանից աւելի բան անել, նորանից աւելի սուրբ և իմաստուն լինել։

ՅԼՈՒՅՆ յառեկտենական կեանուը ճանալում էլ և ընդունում էր իւր և Այս հայրենիքն, այն մհծ, հայրենական գունն, որ շատ օթևաններ ունի, Նա այն տեղը վերադարձաւ, Նա ուզում էր որ, ինքն ուր որ լինի, այն տեղ հասնեն նորանք էլ, որոնց Աստուած իրան տուել է, որ նորանք ամենին էլ իւր և Աստուծոյ հետ միացած լինին։

Քո և մեր ամենքի կոչման վերաբերեալ այս միայն ճշմուրիս և վսիմ գաղափարն ընդունիր քո օրափդ մէջը կենդանի կերպով։ Մի երեւակայիր, որ այս երկիրս, որոյ վերայ գու ապրում ես, և որ քո երկրաւոր անցաւոր կենաց անցաւոր տեսարանն է միայն, քո միակ հայրենի երկիրն է, հասկացիր որ զու այս աշխարհիս վերայ մի պանդուխտ ես ու անցաւոր։ Մի կարծիր, որ ոյս աշխարհս ու ոյս կեանքս զլիաւոր բանն է քո հոգւոյդ համար, այնքան տեղ, որքան որ քո տէրդ՝ միլիօնաւոր աստղերից անցնե-

լով՝ կարում է, ոյնքան տեղ, որքան տեղից որ՝ քեզ անձոնօթ աշխարհներից ու բերանով չպատճենու հեռաւորութիւններից լոյսը փայլում է — ու ես շտո և շտո հեռուս — որովհետեւ երկրիցս տեսնում ենք մենք բոլոր աշխարհի միայն ամենափոքրիկ մասն — ամեն տեղ Աստուծոյ հայրական տունն է:

Ենցու դու էլի սրաով կազում ես աշխարհի փշանալու, հող գառնալու բաներին: Ենցու ես գողում մահիցն այնովէս, որպէս թէ մարմնոյ կառերից հոգւոյդ արձակուելը՝ մարմնոյդ անհետանալը մեծ լինէր քո երկնաւոր Հօրդ տանից: Ենցու ես դու անմիսիթար կը բազով սուգ անում՝ քո սիրելիներիդ զիակի վրայ՝ իբր թէ այն ժամանակ քեզ համար նորա ընդ միշտ և բոլորունին կորած լինէին: Միթէ էլի Աստուծոյ ձեռքի վերայ չեն պահպում նորա նաեւ այն ժամանակ, երբ որ էլ քո մօտդ չեն: Գիտե՞ս դու այն հրձուանքներին, որ նոցա համար պատրաստել է Նա ուրիշ օժեւանների մէջ: Կարելի է, որ դու շատ աւելի գութ անիս, բան թէ ամենողորմ Տէրն ու ամենազութիւն Աստուծոյ որ նոցա և քեզ արդէն սիրելով իւր մոքումն ունէր այն ժամանակ, երբոր զեռ զար չկայիք:

Յիսուս առնայն հոգին ճանալում էր և ընդունում էր էղբայրներ, բոլոր մօրգի կային տղզն՝ իւր ազգականները: «Ով որ իմ երկնաւոր Հօրս կաթին է անում, նա է իմ եղբայրս քոյրս ու մոյրս: » Ուրիշն նա ճանալում էր այս աշխարհի վերայ՝ մեր զործունէութեան միակ շրջան՝ ոչ թէ մասնաւոր՝ սակաւաթիւ անձանց ընտոնիկան կարձատեւ ու անցաւոր կապն, որով կապուած են իւրաք հետու այլ ամենայն հոգիների միմիանց հետ գէալի Աստուծոյ ունիցած նմանութիւնն ու միութեան կապն: Իւր տուած ուսման, խրաների ու քարոզութեան մէջ՝ ոչ թէ ուզում՝ էր Նա մեզ տալ տեսական բարօրութիւն, կամ՝ փափուկ ու լաւ կեանք անցկացնելու համար՝ ամեն յարմարութիւններ, կամ անուն ու վուար ժազուրդի մէջ, — Նա մեր մարմնի վերայ չէր մասնում, այլ այն բանի վերայ ինչ որ մեր մէջը միակ էտեանն ու անողականն է: Նա մուածում էր այն բանի վերայ՝ ինչ որ մեր մէջն անմաշն է և որ մեր մարմնոյն կենդանութիւնն է տալիս, և հոգեսրելով բարձրացնում: Նա աշխատում էր ոչ թէ մի երկրաւոր թագաւորութեան համար, այլ մի երկնաւոր թագաւորութեան, երկնքի արքայութեան համար, բոլոր աշխարհին

Հոգիների երջանկացնելուն համար որոնք որ յաւիտենական Առեղծողի կամքովը մարդկային կերպարանքի մէջ այս աշխարհին երեսը կապրեն։ Նա տրամում էր ու ցաւում, երբ որ տեսնում էր, թէ ինչպէս մարդիկ ամեն բան անում էին իրանց մարմնաւոր վայելչութեան համար և որչափ քիչ էին անում իրանց յաւիտենական կոչման համար։ Նւ այլ և այլ կերպով յիշեցնում էր Նա նոցա թէ՝ զուք ստեղծուած չէք, լաւ ապրելու և ունայն բաների համար, այլ ձեր հոգին փառաւորեցնելու համար։ Դոք ստեղծուած չէք, որ ՅԵՇ ՁԵՇՆ ԵՎՆ անանցանելին զոհէք ձեղանից դուրսն եղած անցաւորին համար։ Ի նչ շահ պէաք էր աւնենար մարդս եթէ որ բոլոր աշխարհս ձեռք բերէր, ու վնաս հասցնէր իւր հոգւայն։ ԶԵՇ կարող զոք Աստուծոյ ծառայել և մամնացիւ։ Նոյն այգով էին մտիկ տաղի մարդկային կեանքի վերայ Նորա Աստուծային արքայութեան նուիրուած աշակերտները։ Դորա համար աստում էր սուրբ Առաքեալն Պօղոս։ որոնք որ մարմնաւոր են, Աստուծոյ հաճիլի լինել չեն կարող։ Բայց զոք մարմնաւոր չէք, այլ հոգեռոր էք, որոհեաւ Աստուծոյ Հոգին է ձեր մէջը բնակվում։ Խոլ ով որ Քրիստոսի հոգին չունին Նա նորանը չէ։

Եթէ որ այտպէս էր գէպի յաւիտենական կեւանքը կոչուած մեր հոգւոյ արժանաւորութիւնն, որոյ համար Քրիստոս աշխարհք եկու, չարչորուեց ու մեռաւ, ուրեմն ամեն ուրիշ բան պէտք չէ համարել էական, ու մենք կը զգանք, որ ամեն մի ուրիշ կորուսա փոքր բան է, միայն թէ չինի այդ մոք չէր հոգւոյ կատարելութեան կորուսաը։

Հարուստ՝ կամ աղքատ լինելը՝ երկուսն էլ Քրիստոսի համար մէկ էր։ Նա շատ անգամ տեղ չէր գտնում գլուխը դնելու բայց այդ նորան քիչ էր տիրեցնում։ Ազգն ուզում էր նորան Դաւիթի գահը բարձրացնել և թագուորական արժանաւորութեան հասցնել։ Նա բոլորին էլ մերժեց, որոնք որ բնդունակ էին բոպէական փայլ միտյն տեսնելու ու փախաւ նոցա՝ գրգռուած գրութիւնից յառաջացած շարժումից ու ցակութիւնից։ Միայն Աստուծ ու յաւիտենական կեանքն աչքին գալով, ոչ մի երկաւոր բանի չափազանց սիրով չէր կոցում։ Մինչեւ անգամ իւր երկրաւոր մայրն, որչափ էլ որ իւր սրամն մօտիկ էր, որչափ էլ որ սրտանց և քնիքոյշ սիրով նորա հոգար քաշում էր, նորա համար ամեն բանից վեր չէր։ Նորա

գործն այս աշխարհիս վերայ՝ էր պտռել, գանելու երջանկացնել նացաւ, որոնք որ կորած էին: Մինչև անգամ իւր կեանքն իւր համար ամեն բանից վեր չէր, ինչու որ հազիւ մի երեսուն տարի կեանք էր ունեցել, ու դոհեց յօժար կամքով աւելի վսեմ նպատակների համար: Մարդասպանները կարող էին այս, նորա մարմինը սպանել, բայց հոգին՝ չէ:

Ինչ որ դու ունիս, ով իմ քրիստոնեայ եղբայր՝ կամ քոյր, այն կանչայտանալ: բայց ինչ որ դու ես, այն կը մնաս: Հրմա քննիք քեզ՝ գու Քրիստոսի մէջ էիր արդեօք, կամ Քրիստոս քո մէջդ էր: Քանի որ քո հոգիդ մարդկային բնութեանդ մէջ ապրում է այս աշխարհու մն, անշուշո պէտք է ացրիդ առաջն ունենաս, կատարելու պարտքերդ՝ առողջութեանդ համար: քո և քոյններիդ ուտելիքի, հագուստի ու հանգստութեան համար: Յիսուսն էլնոյնն էր անում: Անտարակոյս կեանքիդ մէջը կունենաս այնպիսի սուվորութիւններ: որսից կը հետեւիս, որովհետեւ քեզ ախորժ ու համայ կլինին, բայց այդպիսի սովորութիւններդ, այնպէս չես անիլ, որ կեանքիդ գերազոյն կոչումի տեղը բանեն: Հենց որ տեսնես, որ մի սովորութիւնդ թողնելուդ պատճառով սաստիկ ցուես զգումն այդ ապացոյց է, որ զուշատ կապուած, կաշկանդուած ես երեսյթի հետ, քո հոգիդ ճշմարիս ազատութեան աստիճանը չես բարձրացրել, այլ այն դրութեան մէջ թողել, որ զգայական հրապոյրներից յաղթահարվում է: Այդ դրութիւնդ ապացոյց է, որ Քրիստոս գեռ քո կեանքդ չէր, և թէ գու գեռ հեռու ես նորա Աստաւածային մասաման կերպից, որ միայն վայել էր քեզ ունենալ:

Դու կամացուկ ախ ես քաշում ու ասում՝ այդ շատ գժուար բան է: Հենց այդ քո ախ քաշելդ ցոյց է տալիս, որ գու այն չես, ինչ որ պէտք էր լինէիր: Մաքառիր բոլը ուժովդ՝ առանց յետ կենալու այն լինել, ինչ որ պէտք է լինիս: եթէ որ քո երկրաւոր ընաւթիւնդ շատ էլ ոյժ բանեցնի այդ ուղղութեանդ գէմ կենալու: Մաքառիր քաջ սրառով, ինչու որ գլխիդ եկածները վերջը վերջը քո կեանքիդ ուրախութիւնները մէ կը միւսի եաւելից՝ քեզանից կիսկին, որ քեզ զգալ տան թէ՝ ոչ մի բան քոնդ չէ, այլ գու ես միայն քոնդ:

Նաւ հոգ ու խնամք տաք քո տանդ ու քո ունեցած լաւ վիճակիդ ու լաւ որիբուզ վրայ, ինչ զիահս, ինչ կլինի մի կարձ ժամանակից

յետոյ, կարելի է, տարբներից յետոյ, վաժորիկի թուխ թուխ ամպեր կը գան կը լսատին քո տանդ և ունեցած լաւ օրերուդ վերայ և ան հոգ ու խնամք տար քո մարմնոյդ, ինչ գիտես որ մի քանի ամիսներից յետոյ անկողինք կրնենի, կշալուի ու կմաշուի և ան խնամք տար հօրդ, մօրդ, կնկանդ, երեխայիդ, թուանդ, և որին էլ որ սրտանց սիրում ես, ինչ գիտես, ինչ կ'լինի, կարելի է չենց այս տարուան մէջ լաց ու կոծով պէտք է կանգնես նորանցից մէկի դագաղի առաջն, Այս խօսքիրն որ լուսմ ես, ինչու ես զողում, միթէ նոր ես իմանում, որ աշխարհիս ամենայն վայելչութիւնը պէտք է անցկենոյ, թառամի՛ ոչնչանայ դաշտի մի ծաղկի նման, ու միայն Աստուծոյ խօսքը յատ խահան կը մնայ, չսէ նորա խօսքը հաջի է ու իշտ՝ ն+:

Միայն այն ժամանակ, երբ որ դու կը հասկանաս թէ՝ Աստուծուծ ամենայն արարածոց ամենասիրելի Հայրն է, — բոլոր աշխարհը քո Հօրդ տունն, — երկինքը՝ քո խորսկան Հայրենիքն է, — բոլոր հոգիները քո եղբայրներդ են ու Աստուծոյ ընտանիք, որոնց մէջից ոչ մի անգամ, անկարելի է, որ կորչի, — այն ժամանակ դու ունեցած կ'լինիս Ցիսուսի մտածման կերպը: Եւ երբ որ այսպիս, գողափարը քո մէջդ լիակատար իշխանութիւն բանեցնի, ինչպէս կը կարողանաս դու այն ժամանակ՝ այսպիսի Աստուծային մտածմունքներ ունենալովդ էլ՝ Աստուծային չ'լինել, Աստուծոյ հաճոյ բան ցրոնել. — ինչպէս կարող կ'լինես մարդոց առել, որոնց Հօրից որ դու իւր օր հնութիւնն ես խնդրում աղօթքիդ մէջը. — ինչպէս կը կարողանաս անմիտիթար կերպով մահուան առաջը դողակ՝ առանց մտածելու, որ միայն երկրաւորն է անց կենում. — ինչպէս մեծ բանի տեղ կը գնես քո տնային լաւ միճակը, քաղաքացւոց միճակիդ մէջ քո ունեցած քաղցրութիւններդ, օգուաներդ ու առուելութիւններդ և ուրիշ աշխարհային գերազանցութիւններդ, որովհետեւ յաւ համացած կ'լինիս, որ այս բոլորը հնանում է ու անց կենում, ինչպէս այն հագուստն, որ դու հագած ես ու քեզ ծածկած: Խ՞նդրէս կարող ես դու՝ այսպիսի Աստուծային մտածմունքներ ունենալովդ՝ Աստուծային կերպով յը գործել՝ ամենայն սիրայ, բարեացակամութեամբ, ներողամութեամբ, զթութեամբ ու հանգիստ սրտով: Խ՞նդրէս կարող է քեզ այն բանը տիրեցնել Եւրի անունն անբազութիւն ենք դնում ու տառմ, որովհետեւ մի անբազութիւն միայն կայ խօսպէս, Աստուծածայինի հետ ան-

միաբան ու երկսպառակութեան մէջ լինելն, որ է մեղքը: Խշոր և կարող ես դու քո կեանքիդ մէջը նախախնամութեան ճանապարհ-ները քեզ համար մութ են ասել, որովհետեւ դու զիտես, որ ամենայն բան նորանց համար ի բարին լինում, որոնք որ Աստուած են սիրում:

Ինչ համար իւտնի+ Քը իսպո՞ս է: Ո՞չ, որչափ մեծ է այս միաբն ու որպիսի երջանկութիւն է մարդուս համար այսողիսի մազի տէրլի-նելն: որքան քիչ եմ հասկացել Նորա Աստուածային մոքի-խո-րախորհուրդ լիութիւնն: Այս, Դու ուրեմն եղիր իմ կեանքս, ով Աստուածութեան Յայտնող, մոլորուած հոգիների Առաջնորդ, Հոգիների աշխարհի Լոյս: Դու եղիր իմ մէջօ: Քո մտածմունքդ լինի՝ այսուհետեւ իմ մտածմունքս էլ: Քո սրափդ մոքրութիւնը լինի այսուհետեւ իմ ներքին մաքրութիւնն էլ: այն ժամանակ իմ կեանքս էլ կլինի Քո կեանքիդ ոլէս, իմ աղօթքս էլ՝ Քո աղօթ-քիդ նման: Այն ժամանակ ես ոչ մի բանից չեմ վշտանալ, չեմ վիրաւորուիլ — մի խաղաղիկ ու հանգարտիկ երջանկութիւն կը-վայելեմ զեռ այս կեանքիս մէջ: Եւ եթէ երբ և իցէ իմ քաշած երկրաւոր ցաւերս շատ մեծ էլ լինին: բայց և այնպէս խորին հա-մոզմամբս՝ Աստուծոյ և Նորա կամքից չեմ հեռանալ, Նորան ման-կական պարզ ու յստակ սրտով կյանձնուիմ ու կպաշտեմ, և կուրախանամ ամենայն հանգամանացս մէջ, որ ես նորանն եմ: Եւ որովհետեւ մենք մեր գլխի տէրը չենք, այլ Քրիստոսինն ենք իրեւ Նորա ժառանգութիւն և Նորան նուիրուած է մեր բոլոր կեանքն ու Նորան փառաւորելու համար սլիտի լինիս ուրեմն մե-զանից ոչ ոք իւր համար չէ ապրում, մեզանից ոչ ոք իւր համար չէ մեռնում: Եթէ ապրումենք, Աստուծոյ ենք ապրում: և եթէ մեռնումենք, Աստուծոյ ենք մեռնում: Ուզէ հայ էլլի ապրու-դնիւ և էլլի մւռնում: Աստուծունն էնիւ: ուզէ հայ էլլի ապրու-դնիւ և էլլի մւռնում:

(Թարգմ.)